**«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻՏԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25**

ք. Երևան «14» մարտ 2025 թ.

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Արա Խզմալյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՌՆԱ» ՍՊԸ և «Արաջյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս «ԱՌՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Սեդրակյանի և «Արաջյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Արաջյանի, որոնք գործում են Ընկերությունների կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով, նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերականգնողական աշխատանքները (Մատենադարանի ճակատային մասի արծաթյալների, Մաշտոցի արձանի, հարակից քանդակների և նստարանների նորոգման և ամրակայման աշխատանքներ) (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար։ Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը։

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան։

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող **համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 180-րդ օրացուցային օրը ներառյալ։**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ով ներկայացված օրացուցային գրաֆիկով։

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով։

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար։

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կապալառուն էականորեն խախտել է պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր ձևով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3 Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100%-ը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) Նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկով նախատեսված) Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենայն ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներ) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական

աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր եզրակացությունը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24880000 (քսանչորս միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 4146667 (չորս միլիոն մեկ հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է),

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է,

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ,

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը * |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագրի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 4 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 5 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 6 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ծածկոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7 | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 8 | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 9 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 10 | Չի լրացվել աշխատանքների վարման մատյան, կազմվել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր, անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր: | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա;

2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի.

1) տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից.

2) եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում

արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը.
3. Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.07.2023թ. N 57-Ա հրամանի՝
1) Պատվիրատուի կողմից շինաշխատանքների Կապալառու կազմակերպության նկատմամբ պատասխանատվության միջոցները կարող են սահմանվել ըստ առանձին տեսակի խախտումների՝ աշխատանքների պայմանագրային (շարունակական աշխատանքների դեպքում՝ տվյալ բյուջետային տարվա համար կնքված համաձայնագրի արժեքի) արժեքների նկատմամբ համապատասխանաբար 0.5%-ի չափով նվազագույն տուգանքներ հաշվարկելու միջոցով (կետ 23):
2) չկատարված կամ թերի կատարված աշխատանքների նկատմամբ կիրառվող տուգանքի ընդհանուր չափը չի կարող գերազանցել պայմանագրի կամ համաձայնագրի գնի համապատասխանաբար 10%-ը (կետ 26):

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ծնվող բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տոմսանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տոմսանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ<br>ք. Երևան, Մաշտոցի պող. 53<br>ՀՎՀՀ 01503576<br>ՀԼԲ Մյասնիկյան մ/ճ, Հ/Հ 163038100547<br><br>Ա. Խզմալյան ________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱՐՆԱ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ավան 14 փ., տուն 40/4<br>ՀՎՀՀ 01061385<br>Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050922360381001<br><br>Ա. Սեդրակյան ________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված թիվ 1
«14» մարտ 2025թ. կնքված
«ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

# ՇԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(Մատենադարանի ճակատային մասի արձանախմբի, Մաշտոցի արձանի, հարակից սալահատակների և հենապատերի նորոգման և ամրակայման աշխատանքներ)

| N | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ առանց ԱԱՀ) | Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|---|
| **Ճարտարապետական մաս** | | | | | |
| **Գլխավոր մուտք** | | | | | |
| 1 | Մուտքի դիմացի երկու կողմերի պատվանդանների պրոֆիլավոր քիվերի քանդում վերաշարում | քմ | 1 | 160065 | 160065 |
| 2 | Մուտքի դիմացի աստիճանահարթակի վերջին աստիճանի քանդում վերաշարում | քմ | 1,7 | 76572 | 130172 |
| 3 | Մուտքի դիմացի երկու կողմերի պատվանդանների, սալահատակի եվ աստիճանների բոլոր կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ գամածիկով | Գծմ | 250 | 9926 | 2481518 |
| **Թ. Ռոսլինի, Գ. Տաթևացու, Ա. Շիրակացու, Մ. Խորենացու, Մ. Գոշի արձաններ** | | | | | |
| 1 | Արձանների մակերևույթների, ծալքերի և պատվանդանների բոլոր կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ գամածիկով, առկա մակերևույթներին համահունչ վերջնամշակում | 10 գծմ | 3 | 99261 | 297782 |
| **Ֆրիկի արձան** | | | | | |
| 1 | Արձանի պատվանդանի պրոֆիլավոր քիվերի քանդում վերաշարում | քմ | 1,2 | 160065 | 192078 |
| 2 | Արձանի ծալքերի և պատվանդանի բոլոր կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ գամածիկով, առկա մակերևույթներին համահունչ վերջնամշակում | 10 գծմ | 0,5 | 99261 | 49630 |
| 3 | Արձանաշարի ընդհանուր պատվանդանի միջարձանային հորիզոնական հարթակների խախտված սալահատակների քանդում վերաշարում | քմ | 10 | 27865 | 278654 |
| 4 | Գլխավոր մուտքի դիմացի սալահատակի տեղաշարժված քարերի հավաքագրում,քանդում վերաշարում / ըստ վիճակի/ պայմանական | քմ | 1,5 | 27865 | 41798 |
| 5 | Ձախակողմյան պատվանդանի ստորին /հիմնային/ շարքի տեղաշարժված մեծածավալ քարերի քանդում վերաշարում 80*35 և 102*35 չափերով | քմ. | 0,6 | 51550 | 30930 |
| **Մ. Մաշտոցի և Կորյունի արձաններ** | | | | | |
| 1 | Արձանների ծալքերի և պատվանդանի բոլոր կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ գամածիկով, առկա մակերևույթներին համահունչ վերջնամշակում | 10 գծմ | 3 | 99261 | 297782 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Մաշտոցի արձանի պատվանդանի /վերին և ստորին/ փոքրաչափ սալվածքի քանդում հեռացում | քմ | 2,6 | 4875 | 12674 |
| 3 | Պատվանդանի ձախակողմյան անկյունաքարի հորիզոնական մակերևույթի վնասված հատվածի կտրում թեքության վերականգնման նպատակով | քմ | 0,2 | 53771 | 10754 |
| 4 | Մաշտոցի արձանի պատվանդանի /վերին և ստորին/ սալվածքի նոր տաշ ու շար բազալտից | քմ | 2,6 | 71010 | 184627 |
| 5 | Արձանների աջակողմյան սալահատակի կտրում, քանդում վերաշարում խոնավության մղումը թեքելու նպատակով | քմ | 1,5 | 33180 | 49770 |
| **Աջակողմյան և ձախակողմյան սյունասրահներ** | | | | | |
| 1 | Սյունասրահների սյունախարիսխները փակող բազալտյա սալերի /3սմ. / քանդում հեռացում | քմ | 20 | 4875 | 97493 |
| 2 | Սյունասրահների սյունախարիսխների հատվածների վերականգնում բազալտյա սալերով /6սմ. / - տարբերակ-1 | քմ | 20 | 85208 | 1704166 |
| 3 | Սյունասրահների սյունախարիսխների հատվածների վերականգնում -բազալտյա սալերով /18x30սմ. / - տարբերակ-2 | քմ | 14 | 85208 | 1192916 |
| 4 | Սյունասրահների սյունախարիսխների հատվածների վերականգնում -բազալտյա սալերով /6x30սմ. / - տարբերակ-2 | քմ | 6 | 85208 | 511250 |
| 5 | Սյունասրահների սյունախարիսխների հատվածների վերականգնում -բազալտյա սալերով /6x30սմ. / - տարբերակ-2 | քմ | 13,2 | 26697 | 352394 |
| **Հենապատեր, վրադիրներ** | | | | | |
| 1 | Թիվ-1 հենապատի վրադիրների փոխարինում նոր վրադիրներով | քմ | 28,6 | 31049 | 887994 |
| 2 | Թիվ-1 հենապատի սյունյակների վրադիրների փոխարինում նորերով | քմ | 1,4 | 31049 | 43468 |
| 3 | Թիվ-2 հենապատի վրադիր քարերի քանդում, վերաշարում | քմ | 0,8 | 53224 | 42579 |
| 4 | Նույնի վրադիրների ստորին անկյունաքարերի քանդում , վերաշարում | քմ | 1 | 16127 | 16127 |
| 5 | Թիվ-2 հենապատի կոտրված վրադիր քարերի քանդում, փոխարինում | քմ | 0,2 | 31049 | 6210 |
| 6 | Թիվ-2 հենապատի վրադիր քարերի բոլոր կարանների մաքրում կարանալցում ցեմենտով, քարի գույնին համարժեք լցամածիկով | 10 գծմ | 13 | 99261 | 1290389 |
| 7 | Թիվ-3 հենապատի վրադիր քարերի բոլոր կարանների մաքրում կարանալցում ցեմենտով, քարի գույնին համարժեք լցամածիկով | 10գծմ | 3,6 | 99261 | 357339 |
| 8 | Թիվ-3 հենապատի սկզբնամասի բազմանկյուն շարվածքով վրադիրների քանդում վերաշարում | քմ | 3 | 61468 | 184403 |
| 9 | Թիվ-3 հենապատի սկզբնամասի բազմանկյուն շարվածքով վրադիրների նոր տաշ ու շար | քմ | 0,3 | 64798 | 19439 |
| 10 | Թիվ-3 հենապատի սկզբնամասի բազմանկյուն շարվածքի շարունակությունը կազմող խարխլված հատվածի քանդում վերաշարում | քմ | 1 | 61468 | 61468 |
| 11 | Թիվ-3 հենապատի սկզբնամասի բազմանկյուն շարվածքի ստորին ուղղաձիգ սալիկապատի քանդում հեռացում | քմ | 0,8 | 4875 | 3900 |
| 12 | Թիվ-4 հենապատի վրադիր քարերի բոլոր կարանների մաքրում կարանալցում ցեմենտով, քարի | 10 գծմ | 3,6 | 99261 | 357339 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ցոլնին համարժեք լցամածիկով | | | | |
| 13 | Թիվ-4 հենապատի սկզբնամասի բազմանկյուն շարվածքով վրադիրների քանդում վերաշարում | քմ | 1,2 | 16127 | 19352 |
| 14 | Նույնի վրադիրների կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ քարի գույնի լցամածիկով | գծմ | 28,8 | 9926 | 285871 |
| 15 | Թիվ-5 հենապատի վրադիր քարերի քանդում, վերաշարում | քմ | 17,3 | 16127 | 278995 |
| 16 | Նույնի կարանների մաքրում, կարանալցում ջրամերժ քարի գույնի լցամածիկով | 10 գծմ | 5,4 | 100911 | 544920 |
| 17 | Թիվ-6 հենապատի վրադիր քարերի քանդում, վերաշարում լենք 60սմ | քմ | 4,2 | 16127 | 67733 |
| 18 | Թիվ-6 հենապատի վրադիր քարի նոր տաշ ու շար լենք 60սմ | գծմ | 0,12 | 64798 | 7776 |
| 19 | Թիվ 6 հենապատի տարածքի մաքրում հողազանգվածից և մացառներից, հարթեցում | քմ | 90 | 139 | 12492 |
| **Ծաղկանոցներ** | | | | | |
| 1 | Մաշտոցի արձանի պատվանդանի աջակողմյան և ձախակողմյան թեք, եռանկյունաձև ծաղկանոցների 3սմ, հաստության կորագիծ սալերի / թեքություն եզրային/ քանդում | քմ | 4 | 4875 | 19499 |
| 2 | Նույնի տակ լիցքերի քանդում | խմ | 3 | 16041 | 48122 |
| 3 | Նույնի տակ խամքարաբետոնյա լիցքի կատարում | խմ | 4,5 | 52662 | 236979 |
| 4 | Նույնի տակ բազալտյա սրբատաշ շարվածքի կատարում /ծաղկանոցի կողմում/ 10-15սմ հաստութ. | քմ | 9 | 23568 | 212113 |
| 5 | Մաշտոցի արձանի պատվանդանի աջակողմյան եվ ձախակողմյան թեք, եռանկյունաձև ծաղկանոցների 10 սմ. հաստության կորագիծ սալերի /թեքություն եզրային /իրականացում | քմ | 4 | 23568 | 94273 |
| 6 | Մաշտոցի արձանի պատվանդանի աջակողմյան և ձախակողմյան թեք, եռանկյունաձև ծաղկանոցների ստորին 5սմ, հաստության ուղղագիծ սալերի քանդում հեռացում | քմ | 3,6 | 4875 | 17549 |
| 7 | Մաշտոցի արձանի պատվանդանի աջակողմյան եվ ձախակողմյան թեք, եռանկյունաձեվ ծաղկանոցների ստորին 20 x 30սմ. չափերով ուղղագիծ եզրաքարերի նոր տաշ ու շար | քմ | 3,6 | 12910 | 46477 |
| 8 | Թիվ-4 հենապատին հարող ծաղկանոցի եզրաքարերի քանդում, ավելի բարձր նիշով վերաշարում | քմ | 8 | 1057 | 8453 |
| **Եզրաքարեր** | | | | | |
| 1 | Մաշտոցի արձանի հարթակի եզրաքարի նոր տաշ ու շար 30*25սմ քարերով, հին հեռացմամբ | գծմ | 9,7 | 13967 | 135477 |
| 2 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերի քանդում | գծմ | 18,4 | 1057 | 19441 |
| 3 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերի վերաշար 30 x 20 սմ. | գծմ | 9 | 3867 | 34801 |
| 4 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերի նոր տաշ ու շար 30 x 20 սմ. | գծմ | 9,4 | 12883 | 121103 |
| 5 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերին կից սալերի քանդ | գծմ | 11 | 1057 | 11622 |
| 6 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերին կից սալերի /30սմ./ վերաշար | գծմ | 7 | 3840 | 26879 |
| 7 | Առանցքային մեծ հարթակի աջակողմյան եզրաքարերին կից սալերի նոր տաշ ու շար սև բազալտ | գծմ | 4 | 12906 | 51622 |
| 8 | Ավտոկայանատեղիի ստորին անկյունային եզրաքարի | գծմ | 1,3 | 17427 | 22655 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նոր տաշ ու շար 30 x 20 սմ | | | | |
| **Սալահատակ** | | | | | |
| 1 | Սալահատակի քանդում վերաշարում 10 x 6 x 60 սմ. երեսի մշակմամբ | քմ | 8,6 | 32484 | 279360 |
| 2 | Սալահատակի նոր տաշ ու շար հին հեռացմամբ 30 x10 x լ սմ. Սև ծակոտկեն բազալտ | քմ | 10,5 | 55089 | 578435 |
| 3 | Սալահատակի նոր տաշ ու շար հին հեռացմամբ 15 x10 x լ /40-50/ սմ. երեսի մշակմամբ | քմ | 113 | 52913 | 5979167 |
| 4 | Սևաղյա քարերի ապամոնտաժում | գծմ | 7,5 | 450 | 3374 |
| 5 | Տարածքում շինանյութի լցացույցի տեղափոխում /մոտավոր/ | տն | 50,4 | 792 | 39938 |
| 6 | Շինաղբի բարձում, բեռնատարով տեղափոխում 13կմ | տն | 50,4 | 3606 | 181745 |
| **Ընդամենը (ՀՀդրամ առանց ԱԱՀ)** | | | | | **20733333** |
| **ԱԱՀ 20% (ՀՀդրամ)** | | | | | **4146667** |
| **Ընդամենը (ՀՀդրամ, ներառյալ ԱԱՀ)** | | | | | **24880000** |

* Կապալառու աշխատանքները կատարում է ՀՀ ք. Երևան, Մ. Մաշտոցի 53 հասցեում:

Պայմանագրի շրջանակներում կապալառուի կողմից ներկայացվող կատարողականներում չնախատեսված աշխատանքների ծախսերը պետք է հաշվարկվեն 50% չափով /3%/ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամ<br>ք. Երևան, Մաշտոցի պող. 53<br>ՀՎՀՀ 0150357<br>ՀԷԲ Մյասնիկյան 6/6, Հ/Հ 163038100547<br>Ա. Խզմալյան ________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱՌՆԱ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ավան 14 փ., տուն 40/4<br>ՀՎՀՀ 01061385<br>Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050922360381001<br>Ա. Սեդրակյան ________<br>(ստորագրություն) |

Հավելված թիվ 2
«17» մարտ 2025թ. կնքված
«ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

## Զափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(Մատենադարանի ճակատային մասի արձանախմբի, Մաշտոցի արձանի, հարակից սալահատակների և հենապատերի նորոգման և ամրակայման աշխատանքներ)

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետ | |
|---|---|---|---|
| | | Սկիզբ | Ավարտ |
| 1 | I. Վերականգնողական աշխատանքներ | համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 180 – րդ օրացուցային օրը ներառյալ: |
| | **Ընդամենը՝ կատարման ենթակա աշխատանքներ** | **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում** | **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 180 – րդ օրացուցային օրը ներառյալ:** |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ<br>ք. Երևան, Մաշտոցի պող. 53<br>ՀՎՀՀ 01593576<br>ՀԷԲ Մյասնիկյան մ/ճ, Հ/Հ 163038100547<br><br>Ա. Խզմալյան ________ (ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱՌՆԱ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ավան 14 փ., տուն 40/4<br>ՀՎՀՀ 01061385<br>Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050922360381001<br><br>Ա. Մեղրակյան ________ (ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված թիվ 3
«14» մարտ 2025թ. կնքված
«ՄԱՏ-ԳՀԱԾՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Աշխատանքի որից՝ վճարումները նախատեսվում է իրականացնել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45451600/501 | **Վերականգնողական աշխատանքներ** (Մատենադարանի ճակատային մասի արձանախմբի, Մաշտոցի արձանի, հարակից պատվանդանների և հենապատերի նորոգման և ամրակայման աշխատանքներ) | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |

* Վճարման ենթակա գումարները նշվում են աճողական կարգով: Երբ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս
** Իրավիճակում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տվյալ տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ<br>ք. Երևան, Մաշտոցի պող. 53<br>ՀՎՀՀ 01580576<br>ՀՀԸ Մյասնիկյան 2/6, Հ/Հ 163038100547<br><br>Ա. Խաչատրյան ____________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱՌՆԱ» ՄՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ավան 14 փ., տուն 40/4<br>ՀՎՀՀ 01061385<br>Բանկ՝«Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2050922360381001<br><br>Ա. Սերոբյան ____________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված թիվ 4
«24» մարտ 2025թ. կնքված
«ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

КАПԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ) ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

**Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ**

(Մատենադարանի ճակատային մասի արձանախմբի, Մաշտոցի արձանի, հարակից սալահատակների և հենապատերի նորոգման և ամրակայման աշխատանքներ)

Մատենադարանի ճակատային մասի արձանախմբի, Մաշտոցի արձանի, հարակից սալահատակների և հենապատերի նորոգման և ամրակայման աշխատանքների կատարման ընթացքում ներկայացվող պահանջները՝ աշխատանքների կատարման ընթացքում կիրառվող նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան 30 տարի երաշխիքային ժամկետ:

**Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրացուցային օրը:*

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ |
|---|---|
| «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի Անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամ<br>ք. Երևան, Մաշտոցի պող. 53<br>ՀՎՀՀ 01503876<br>ՀԷԲ Մյասնիկյան մ/ճ, Հ/Հ 163038100547<br><br>Ա. Իսգմալյան ________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱՌՆԱ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ալան 14 փ., տուն 40/4<br>ՀՎՀՀ՝ 01061385<br>Բանկ՝«Ինեկոբանկ»ՓԲԸ<br>Հ/Հ 2050922360381001<br><br>Ա. Մեղրալյան<br>(ստորագրություն) |

Հավելված թիվ 4.1

«11» մարտ 2025թ. կնքված

«ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրի

**ՀԱՎԱՍՏՈՒՄ**

**իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին**

«ԱՌՆԱ» ՍՊԸ և «Աբաջյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը հավաստում է, որ «ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում կնքվող «ՄԱՏ-ԳՀԱՇՁԲ-06/25» ծածկագրով պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում պարտավորվում է տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ։

| ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- |
| «ԱՌՆԱ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Ավան 14 փ., տուն 10/4<br>ՀՎՀՀ՝ 01061385<br>Բանկ<br>ՀՀ<br>Ա. Սեդրակյան __________<br>(ստորագրությունը)<br>Կ.Տ. |